ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ռիմմա Պողոսյան
Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Սույն գիտական հոդվածում հիմնովին ուսումնասիրվել է Հայաստանի քաղաքական և սոցիալական իրավիճակը, շեշտադրելով ժողովուրդ-իշխանություն փոխհարաբերությունները: Ուսումնասիրությունների հիմնական ուղղությունները եղել են կորոնավիրուսի պայմաններում պետականության կայացման գործում հասարակության վերաբերմունքը, դերն ու նշանակությունը: Կատարված սոցիոլոգիական հետազոտությունները կապված են եղել երկրի տնտեսական ու քաղաքական իրավիճակների, ժողովրդավարական գործընթացների հետ:

Բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար նշված հիմնախնդիրները, իրականացվել են որոշ հեռախոսային սոցիոլոգիական հետազոտություններ, ընդգրկելով հանրապետության մի քանի քաղաքներ և գյուղեր: Ուսումնասիրություններից ստացված արդյունքները խորը վերլուծության են ենթարկվել, ինչպես նաև հանրապետական մամուլում և հեռուստահաղորդումներում[1]: Նշենք, որ ստացված արդյունքների մասին զեկուցումներ են ներկայացվել երկու միջազգային առցանց գիտաժողովներում, ինչպես նաև բազմակի տեղական և արտասահմանյան սեմինարներում:

Պետությունը և հասարակությունը հանդիսանում են պատմասոցիալական գործընթացի գլխավոր և անմիջական մասնակիցներ և նրանց դերերն ու հարաբերակցությունը, հասարակարգի բնույթից կախված, փոխվում են տարբեր ժամանակաշրջաններում: Հայաստանում, որը դեռևս գտնվում է զարգացման շրջանում, պետություն-հասարակություն փոխհարաբերություններն անկախության հռչակումից ի վեր, խիստ փոփոխությունների են ենթարկվել: Մեր

[1] Մանրամասն տե՛ս Republic of Armenia. Public Political Organizations. Yerevan, 1997.

կողմից կատարված բազմաթիվ հանրային կարծիքի հարցումների և սոցիալական ուսումնասիրությունների արդյունքների գիտական մշակումները ցույց են տալիս, որ հասարակություն-պետություն փոխհարաբերությունները մեզանում դեռևս վերջնականապես հստակեցված չեն և գտնվում են զարգացման փուլում: Մեր ուսումնասիրության արդյունքները վկայում են նաև այն մասին, որ արտակարգ իրավիճակի պայմաններում ապրող երկրի համար ժողովրդավարական ինստիտուտների կայացման գործում հասարակության մասնակցության կարևորությունը մասամբ անտեսվում է, ինչը հանգեցնում է իշխանություն-ժողովուրդ փոխհարաբերությունների անջրպետի խորացմանը և փաստորեն, հասարակութ-յան լայն շերտերն արտամղվում ու դուրս են մնում հասարակության քաղաքական ու տնտեսական վերափոխման ակտիվ գործընթացներից[2]:

Հասարակության կեցությունը, զարգացման ներուժն ու հեռանկարները պայմանավորված են ոչ միայն երկրի տնտեսական զարգացման մակարդակով, այլև մարդկային ներուժի զարգացմամբ: Կայուն զարգացման գլխավոր պայմաններից մեկը մարդկային ներուժի զարգացումն է: Հասարակության կայուն զարգացումն ապահովելու համար շատ կարևոր է հաստատել սոցիալական համերաշխության, համագործակցության և ինտեգրման հարաբերություններ:

Հայաստանում, որպես բարդ ու ճգնաժամային շրջանում գտնվող երկրում, և առավելապես որպես էքստրեմալ վիճակում գտնվող երկրում, սոցիալական համագործակցությունը արդյունավետ վերապրելու ռազմավարական նշանակություն է ձեռք բերում: Ճգնաժամային իրավիճակներից դուրս գալու անհրաժեշտ նախապայմանը հասարակության կողմից իր բոլոր կարող ուժերի համախմբումն է: Սոցիալական տարբեր շերտերի, քաղաքական կուսակցությունների և հոսանքների, հասարակական շարժումների, վերջապես, իշխանությունների և ընդդիմության համագործակցությունը միայն կարող է նպատակաուղղված առաջընթաց

[2]Տե՛ս **Պողոսյան Գ.**, Անցումնային շրջանը և սոցիալական համագործակցությունը // Աշխատանքներ ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի. Պրակ 1, Եր., 1998, էջ 3-13:

ապահովել: Քաղաքացիական համերաշխությունը գաղափարական և հոգևոր հիմք է ստեղծում սոցիալական համագործակցության զարգացման համար: Հայաստանի պայմաններում սոցիալական համագործակցության առանցքը պետություն-հասարակություն հարաբերություններն են[3]: Իշխանությունների և ժողովրդի տարբեր շերտերի միջև համագործակցության հաստատումը կարող է արդյունավետ դարձնել վերափոխումների ողջ համալիրը, հաղթահարել փոխադարձ օտարումը: Համագործակցության մթնոլորտը Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ է նաև տնտեսական բարեփոխումներին լայն ժողովրդական զանգվածներին մասնակից դարձնելու համար, ինչը կնպաստի նաև երկրից արտագաղթի նվազեցմանը:

Սոցիալական համագործակցությունը անհրաժեշտ է նաև հարյուր հազարավոր փախստականների ինտեգրման համար, սոցիալական ծայրահեղությունների, աղքատության, ռեգիոնալ անհավասարութ-յունների մեղմացման համար:

Հայ հասարակության առջև ծառայած բազմաթիվ խնդիրների լուծման բանալին սոցիալական համագործակցությունն է, համաձայնությունը հասարակության տարբեր հատվածների՝ հատկապես իշխանությունների և ժողովրդի միջև: Ընդ որում՝ համագործակցությունը հանդես է գալիս ոչ միայն որպես սոցիալական հարաբերությունների ընդհանուր բնութագիր, այլև մարմնավորում է ստանում իշխանությունների և հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության միջև կնքվող բազմապիսի համաձայնագրերի տեսքով: Ժամանակին հասարակական կյանքի բոլոր բնագավառների ազատականացման շնորհիվ մեծ հնարավորություններ ընձեռվեցին քաղաքական բազմապիսի նախաձեռնությունների համար: Մեր հասարակությունը մտավ իսկապես պատմական վերափոխությունների շրջան, և մարդկային զարգացման նոր հեռանկարներ բացվեցին: Համամարդկային արժեքների, հումանիզմի սկզբունքների և մարդու հիմնական իրավունքների գերակայությունը որոշիչ դեր ունեցավ նոր տիպի հասարակության ձևավորման և զարգացման գործընթացում[4]:

---

[3]Մանրամասն տե՛ս **Խաչատրյան Հ.**, Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Եր., 1997:

[4] Տե՛ս Массовые демократические движения: истоки и политическая роль. М., 1988. С. 31-44.

Ակնհայտ փոփոխություններ տեղի ունեցան հասարակության քաղաքական և տնտեսական կառուցվածքի դեմոկրատացման ուղղությամբ: Սակայն արտակարգ իրավիճակի շրջանն աչքի է ընկնում ոչ միայն առողջապահական կամ քաղաքական նվաճումներով, այլև սոցիալական ու տնտեսական կորուստներով: Շուկայական տնտեսությունն ի հայտ բերեց և առավել սրեց այնպիսի երևույթներ, ինչպիսիք են սոցիալական բնույթի մի շարք բացասական հետևանքներ՝ գործազրկության կտրուկ աճ, տնտեսական ճգնաժամ, բնակչության աղքատացում, սոցիալական բևեռացում, նախկինում գործող սոցիալական պաշտպանության և ապահովության համակարգերի փլուզում, սոցիալական երաշխիքների բացակայություն, պետության դերի անկում, ինչպես նաև հասարակության պառակտման միտումներ[5]:

Նշենք նաև, որ սոցիալական արդարությանը, հավասարությանն ու սոցիալական համագործակցությանը լուրջ հարված հասցվեց: Սոցիալական հարցումները ցույց տվեցին, որ այս ամենի հետևանքով հասարակության մեջ աճում են անցյալի նկատմամբ կարոտաբաղձական տրամադրությունները, բացասական վերաբերմունքը տնտեսական վերափոխումների հանդեպ: Տեղի է ունենում ժողովրդավարական և հեղափոխական գաղափարների արժեզրկում[6]:

Ստեղծված իրավիճակում չափազանց կարևոր է իշխանությունների շրջադարձը դեպի սոցիալական համագործակցության, սոցիալական ինտեգրման և բնակչության տարբեր շերտերի համախմբման, կոնսոլիդացիայի քաղաքականություն: Առանց բնակչության լայն զանգվածների շահագրգիռ աջակցության, առանց սոցիալական համաձայնության ու համագործակցության անհնարին է այս համավարակի հաղթահարումն, ինչպես նաև ժողովրդավարության զարգացումն ու քաղաքացիական հասարակության կառուցումը:

Օբյեկտիվ սոցիալական պայմանները կարող են ինչպես խթանող, այնպես էլ արգելակող դեր կատարել սոցիալական համագործակցության հասնելու ճանապարհին: Յուրաքանչյուր հասարակարգ

---

[5] Տե՛ս **Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Ս.**, Քաղաքականության պատմական դասերը և արդիականությունը, Եր., 1999, էջ 15-16:

[6] Մանրամասն տե՛ս **Պողոսյան Գ.Ա.**, Հայ հասարակությունը XXI դարասկզբին, Եր., Լուսաբաց, 2006:

ունի իրեն բնորոշ օբյեկտիվ հիմքերն ու գործոններն, որոնք ազդում են սոցիալական համագործակցության իրականացման վրա: Գլխավորը հասարակության մեջ գոյություն ունեցող քաղաքական, տնտեսական, մշակութային և էթնիկական հիմքերն են:

Սոցիալական համագործակցության քաղաքական հիմքերը կազմում են, հիմնականում, պետության և հասարակության, իշխանությունների և ժողովրդի, նոր իշխող քաղաքական վերնախավի և ընդդիմության միջև եղած հարաբերությունները: Այս առումով Հայաստանում իրավիճակը զգալի էվոլյուցիա է ապրել անկախության ձեռքբերումից և հատկապես՝ 2018 թվականի դեպքերից հետո: Առաջին տարիներին քաղաքական կուսակցությունների և ուժերի փոխհարաբերություններն, ընդհանուր առմամբ, կրում էին համագործակցության բնույթ, ինչը չեր բացառում նաև մրցակցությունը: Վերապահություն պետք է անել նախկին կոմունիստների վերաբերյալ, որոնց մի մասն անցավ քաղաքական ընդհատակ և արձագանքում էր ժողովրդի աստիճանաբար աճող դժգոհությանը: Մի քանի տարվա ընթացքում մրցակցությունը վերածվեց հակամարտության, իսկ հետո՝ նաև խիստ ընդդիմության և պայքարի, որ իր հատկապես ցայտուն արտահայտությունը գտավ 1996 թ. սեպտեմբերի, 2008 թ. մարտի 1-ի ընտրությունների և 2018թ. իշխանափոխությունից հետո ընկած ժամանակաշրջանում :

Ժողովրդի և իշխանության փոխհարաբերություններն այնքան էլ հաջող ընթացք չեն ունեցել: Այդ հարաբերությունները փոփոխությունների վայրընթաց ճանապարհ անցան՝ սկսած ժողովրդի՝ նոր իշխանություններին խանդավառ ողջունելուց մինչև հիասթափություն: Դա փոխադարձ անվստահության, մեղադրանքների, հասարակությունը կտրուկ կերպով «նորերի» և «հների», «սևերի» ու «սպիտակների» բաժանելու ժամանակն է: Անկախ պետականության կառուցման և ամրապնդման հետ մեկտեղ ավելի է խորանում պետության և ժողովրդի միջև եղած անջրպետը: Դրա հիմնական պատճառն այն է, որ իշխանությունների ողջ ուշադրությունը, և ոչ միայն ուշադրությունն, այլև միջոցներն, ուղղված են նոր հեղափոխական պետական կառույցների ստեղծման, ամրապնդման ու զարգացման խնդրին: Հասարակությունը, որպես հիմնական գործընկեր, ուշադրությունից դուրս է մնացել, հայտնվել է «խաղից դուրս» վիճակում, որի հետևանքով և բնականաբար կրկին ի հայտ

եկան քաղաքացիների և հասարակության լայն խավերի օտարման երևույթները[7]:

Պետություն-հասարակություն, իշխանություն-ժողովուրդ շահագրգիռ և արդյունավետ համագործակցության համար համապատասխան մեխանիզմներ դեռ չեն ստեղծվել, իսկ առանձին ձեռնարկված քայլերը, ինչպես, օրինակ, Հայաստանի արհմիությունների համադաշնության և կառավարության միջև 1994 թ. ստորագրված պայմանագիրը մնաց խոր անցյալում, իսկ 2008թ. հուլիսի 12-ին ստեղծված Հանրային Խորհուրդը[8] մեր կարծիքով այդպես էլ չկարողացավ հանրային շահերի ներկայացուցիչն ու պաշտպանը դառնալ իշխանական ատյաններում:

Սոցիալական համագործակցության ու սոցիալական կոնսոլիդացիայի զարգացման համար անհրաժեշտ քաղաքական հիմքերը առայժմ բավարար չեն: Ստեղծված քաղաքական իրավիճակը հաճախ խոչընդոտում է համագործակցության իրականացմանը: Եվ, այնուամենայնիվ, քաղաքական ոլորտում գոյություն ունի մի ուժեղ դրական գործոն: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության անկախության համար մղած պայքարը ոչ մեկին անտարբեր չթողեց և հանդիսացավ այն միավորող ուժերից մեկը, որը ընդդիմության, ժողովրդի և իշխանությունների միջև համագործակցության քաղաքական հիմք ստեղծեց: Համենայն դեպս մինչ վերջերս դա այդպես էր: Մյուս նպաստավոր գործոնը՝ քաղաքական կողմնորոշումն է դեպի նոր Ռուսաստան, որի վերաբերյալ համաձայնություն կա հասարակության գրեթե բոլոր ուժերի միջև:

Սոցիալական համագործակցության տնտեսական հիմքերը Հայաս-տանում դեռևս լավ զարգացած չեն: Հասարակության սոցիալական կառուցվածքի մեջ տեղի է ունենում ինտենսիվ շերտավորում: Աճել է անապահովների, չունևորների և աղքատների թիվը: Գործազրկության բարձր մակարդակի և չափազանց ցածր աշխատավարձերի հետևանքով շատ ընտանիքներ հայտնվեցին չքավորության եզրին[9]:

---

[7]Տե՛ս **Պողոսյան Գ., Հարությունյան Մ., Առաքելյան Վ.**, Հայաստան. Օտարացած հասարակություն, Եր., Լուսաբաց հրատ., 2007, 169 էջ:

[8]Տե՛ս https://publiccouncil.am/

[9] Տե՛ս **Պողոսյան Գ.Ա.**, Հայ հասարակությունը XXI դարասկզբին, Եր., Լուսաբաց, 2006, 376 էջ:

Զանգվածային աղքատացման ընդհանուր ֆոնի վրա սկսեցին առանձնանալ հարուստ և գերհարուստ «օլիգարխների» ոչ մեծաթիվ խմբեր: Առաջացած տնտեսական բևեռացումը խոչընդոտում է սոցիալական համագործակցության զարգացումը: Մասնավոր գործարարությունը և անհատ ձեռներեցությունը դեռևս չեն դարձել տնտեսական գործունեության այն ձևերը, որոնք հավասարապես մատչելի լինեն բոլոր քաղաքացիների համար[10]:

Փորձագետների գնահատականների համաձայն, բնակչության 5 % պատկանում է ազգային հարստության մեծ մասը[11]: Պայքար է գնում ազդեցությունների ոլորտների վերաբաշխման համար, և շարքային ձեռներեցներին խիստ դժվար է տնտեսական կյանքում իրենց տեղը գտնել:

Սոցիալական համագործակցություն հաստատելու համար պակաս կարևոր չէ էթնիկական և մշակութային հիմքերի առկայությունը: Հայաստանը էթնիկապես միատարր երկիր է: Բնակչության 97%ը կազմում են հայերը[12]: Այստեղ չեն եղել և չկան լուրջ էթնիկական և ազգամիջյան բախումներ, և այս առումով սոցիալական համագործակցության համար պայմանները խիստ նպաստավոր են:

Չնայած բնակչության էթնիկական միատարրության, երկրում, այնուամենայնիվ, կան բազմամշակութային հասարակության որոշ տարրեր: Տարիներ շարունակ երկրի բնակչությունը համալրվել է աշխարհի տարբեր ծայրերից վերադարձող հայերով: 1980-ական թվականների վերջին և 90-ականների սկզբին հարևան Ադրբեջանից Հայաստան եկան հարյուր հազարավոր բռնագաղթված մեր հայրենակիցներ:

Հաստատվելով Հայաստանում՝ ներգաղթողներն իրենց հետ բերում էին այն երկրների մշակութային ազդեցություններն, որտեղ ապրել էին մինչև տեղափոխվելը: Նրանք սովորաբար ստեղծում էին ազգակցային մշակութային խմբեր, շարունակում շփումներ ունենալ միմյանց միջև: Այսպիսով, երկիրը համալրվում ու հարստանում էր բազմապիսի մշակութային ազդեցություններ կրող մարդկանցով:

---

[10]Տե՛ս **Պողոսյան Գ., Հարությունյան Մ., Առաքելյան Վ.**, նշված աշխտ., 169 էջ:

[11] Տե՛ս **Պողոսյան Գ.Ա.**, Հայ հասարակությունը XXI դարասկզբին, Եր., Լուսաբաց, 2006, էջ 23:

[12] Տե՛ս www.armstat.am

Հոգևոր համաձայնության անկյունաքարերից մեկն է քրիստոնեությունը: Այն միավորում է ողջ հայությանը թե՝ Հայաստանում, թե՝ Սփյուռքում[13]:

Կառավարման վարչահրամայական համակարգից անցումը դեպի ժողովրդավարականի բավականին երկար է տևում և հասարակության համար հիվանդագին բնույթ է կրում: Պլանային տնտեսության վերածումը շուկայականի տեղի է ունենում հասարակության տնտեսական կառուցվածքի մի շարք աստիճանական վերափոխումների միջոցով[14]: Այդ վերափոխումների սոցիալական գինը շատ բարձր է: Արտադրության կտրուկ կրճատման հետևանքով՝ հատկապես համավարակի պայմաններում, մեծ թվով աշխատողներ զրկվեցին գոյատևման միջոցներից: Բյուջետային հատկացումների կրճատումը կրթության, գիտության, մշակույթի, բժշկության բնագավառներում հանգեցրեց նրան, որ տեղի ունեցավ այդ բնագավառներից որակյալ կադրերի հոսք դեպի այլ, հիմնականում փոքր մասնավոր գործարարություն, անհատական աշխատանքային գործունեություն, առևտրի ոլորտ: 1988թ. կործանարար երկրաշարժը վնասեց հանրապետության մոտ 40%-ը: Այնուհետև Լեռնային Ղարաբաղի շուրջ ընթացող պատերազմի պատճառով Ադրբեջանը շրջափակման ենթարկեց Հայաստանը՝ փակելով իր տարածքով անցնող երկաթգծի, ավտոտրանսպորտի ճանապարհները և գազամուղը[15]: Զանգվածային չքավորությունը ի հայտ եկավ որպես շրջափակման, պատերազմի, էներգետիկ ճգնաժամի, արտադրության անկման, տնտեսական վերափոխումների սոցիալական հետևանք: Որպես սոցիալական երևույթ, այն իր հերթին սկսեց ազդել տնտեսական վերափոխումների ընթացքի վրա: Չքավորության տնտեսական գինը նույնպես բավականին բարձր է: Այն խոչընդոտում է տնտեսական զարգացումը՝ անվերադարձ կերպով կլանելով հսկայական միջոցներ, այդ թվում և պետական բյուջեից:

---

[13] Տե՛ս **Միրուման Կ.**, Մտավորականություն, քաղաքականություն, իշխանություն, Եր., 1994, էջ 25:

[14] Տե՛ս **Gerd Schienstock, Osmo Kuusi**,Transformation Towards a Learning Economy, Helsinki,1999, p 32.

[15] Տե՛ս **Погосян Г.А.**, Соврменное армянское общество:особенности трансформации, Москва, 2005, «Academia», С. 82-86.

Հողի սեփականաշնորհումը, լինելով, անշուշտ, դրական երևույթ, ունեցավ նաև իր բացասական հետևանքները: Սեփականաշնորհման ընթացքում թույլ տրված անարդարությունների, գործընթացի անհամաչափության հետևանքով, ինչպես նաև սեփականաշնորհված հողերի անհավասար պտղաբերության պատճառով գյուղական բնակչության մի մասը, հատկապես բարձրալեռնային շրջաններից, ջրազուրկ և չոր վայրերից, ստիպված եղավ գաղթել քաղաքներ՝ աշխատանք փնտրելու նպատակով[16]:

Արտագաղթը հանրապետությունից դեպի այլ երկրներ՝ աշխատանք փնտրելու նպատակով, մեծ չափերի հասավ: 90-ական թվականներից սկսված աշխատուժի անկազմակերպ, տարերային արտահոսքը կապիտալի արտահանման հետ մեկտեղ թուլացրեցին երկրի տնտեսական ներուժը[17]: Փաստորեն երկրից դուրս եկավ տնտեսապես ակտիվ բնակչության 30%-ը[18], ընդորում՝ այն մարդիկ, ովքեր պետք է հանդիսանային բնակչության նոր կազմավորվող միջին խավի կորիզը:

Տնտեսապես ակտիվ բնակչության տեղաշարժերի հետևանքով տարեցների, երեխաների, գործազուրկների, փախստականների, տնային տնտեսուհիների և մյուս անապահով խավերի տոկոսաչափը ընդհանուր բնակչության մեջ աճեց: Այսպիսով, աճեց պետության վրա ընկած բեռը, քանի որ այն պարտավոր է հոգածություն տանել անապահով խավերի նկատմամբ: Դրանով իսկ լրացուցիչ արգելքներ ստեղծվեցին երկրի նոր կայացող շուկայական տնտեսության համար[19]:

Սոցիալական օտարման զգացողությունը հասարակության մեջ առաջացավ ոչ միանգամից, այն աստիճանաբար հասունացավ՝ ընդգրկելով հասարակական կյանքի տարբեր ոլորտները: Հայաստանում սոցիալական օտարման զգացողությունը բավականին երկարատև գործընթացի հետևանք եղավ, նրա հիմքում ընկած էին մի ամբողջ շարք հիասթափություններ, արժեքների վերագնահատման ու կորուստների գիտակցումը: Հիասթափության տրամադրությունները

---

[16] Նույն տեղում, էջ 96-104:

[17] Մանրամասն տե՛ս **Poghosyan G.**, Armenian Migration, Yerevan, Europrint, 2014:

[18] Նույն տեղում, էջ,106-107:

[19] Տե՛ս **Погосян Г.А., Аракелян И.А., Осипов В.Г.,** Миграция и депопуляция в Армении, Ер., «Лимуш», 2017.

սկիզբ առան դեռ 1992 թվականից: Մինչ այդ ժողովրդի վերաբերմունքը անկախության շարժման ղեկավարների հանդեպ միանշանակ կերպով դրական էր: Նրանք վայելում էին հարյուր հազարավոր քաղաքացիների աջակցությունը, համակրանքն ու սերը: Այդ ժամանակահատվածում իշխում էին փոխըմբռնման և շահագրգիռ համագործակցության տրամադրությունները: Սակայն որոշ ժամանակ անց երևացին դժգոհության առաջին նշույլները: Աստիճանաբար աճեց ժողովրդի հիասթափությունը նոր իշխանություններից: Այդ հիասթափության պատճառները հիմնականում կյանքի դժվարին պայմաններն էին, մարդիկ նախապատրաստված չէին ծանր զրկանքների: Դրական ակնկալիքներին փոխարինելու եկավ դառը իրականությունը:

Հասարակության համար, ընդհանուր առմամբ, այդ հիասթափությունն արտացոլում էր չափազանց մեծ սպասելիքների ու չիրականացած հույսերի միջև եղած հակասությունը: Վրա հասած հիասթափությունը անխուսափելիորեն տարածվեց նաև նոր արժեքների վրա՝ ժողովրդավարության, անկախության, ազատ շուկայական հարաբերությունների Առաջնորդների և իշխանությունների հանդեպ եղած վստահությունը փոխարինվեց անվստահության ու ընդդիմության տրամադրություններով: Հիասթափության ալիքը տարածվեց նաև քաղաքական ընդդիմության վրա: Հասարակական կարծիքի համաձայն, քաղաքական ընդդիմության հաղթանակը չէր հանգեցնի երկրում տիրող իրավիճակի կտրուկ բարելավմանը: Ժողովրդի 65%-ը շարունակում էր մնալ բազմաթիվ քաղաքական կուսակցությունների ազդեցությունից դուրս՝ չհարելով դրանցից ոչ մեկի գաղափարներին[20]:

Սովորաբար սոցիալական օտարման վիճակում մարդիկ դադարում են պատասխանատվություն զգալ իրենց շրջանի, քաղաքի և երկրի ճակատագրի համար: Նրանց հետաքրքրությունները սահմանափակվում են ընտանիքի, մտերիմների, ընկերների շրջանակներով: Տեղի է ունենում հասարակական կյանքի մասնաբաժանում ու հատվածականացում: Օտարումը կարելի է

[20] Մանրամասն տե՛ս Тенденции и риски радикализации общества. На материалах социологического исследования в Армении и Беларуси/Гл. ред. **Погосян Г.А.** Ер., «Европринт», 2019.

հաղթահարել հասարակության ուղղահայաց և հորիզոնական կառուցվածքներում սոցիալական համագործակցության սկզբունքների զարգացման միջոցով: Սոցիալական տարամիտումը նվազում է համագործակցության և աջակցության սոցիալական հարաբերությունների զարգացման հետ մեկտեղ[21]: Հասարակության հիմնական գործող ուժերի միասնական, համակարգված գործունեությունը հնարավորություն է ընձեռում կրճատել սոցիալական տարածքում տեղի ունեցող անհաջողություններն և ստեղծել ավելի արդյունավետ հասարակություն: Հանուն ընդհանուր նպատակի համագործակցելու գաղափարախոսությունն ընկած է հասարակության հաջող զարգացման հիմքում: Սոցիալական համաձայնությունը և համագործակցությունը կարող են հաղթահարել բոլոր տեսակի արտաքին խոչընդոտները: Դրա ապացույցն են 80-ական թվականների վերջի դժվարին տարիները, երբ հայ ժողովուրդը մեկ մարդու պես պաշտպանում էր Ղարաբաղի անկախության պայքարը: Սա սոցիալական համագործակցության մի օրինակ էր: Մարդկանց սոցիալական հիշողության մեջ նման համագործակցության շատ օրինակներ կան:

Համագործակցությունը, որպես փոխադարձ ակտիվ գործընթաց, ենթադրում է բոլոր մասնակից կողմերի շահագրգիռ ակտիվություն[22]: Պետություն-հասարակություն և իշխանություն-ժողովուրդ հարաբերությունների համակարգում, ինչպես նաև ներհասարակական հարաբերությունների ենթահամակարգում և Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում, պետությունը պետք է ստանձնի նախաձեռնողի, այդ հարաբերություններին որոշակի երանգ ու բնույթ հաղորդողի դերը:

Հայ հասարակության և նոր ժողովրդավարական պետության հարաբերությունների ձևավորման սկզբում հասարակությունը բաց էր համագործակցության համար: Այդ պահին հասարակական-պատմական գործընթացի երկու գլխավոր գործող սուբյեկտների միջև

---

[21]Տե՛ս **Белл Даниель**, Грядущее постиндустриальное общество. Москва, Академия, 1999. С.182.

[22] Տե՛ս **Турен Ален**, Возвращение человека действующего, Москва, «Научный мир»,1998. С. 76.

տիրում էին փոխադարձ վստահության հարաբերություններ: Պետական անկախությունը, նոր ժողովրդավարական հասարակություն հիմնելու ձգտումը հատուկ իմաստ ու հույսեր էին ներշնչում ապագայի հանդեպ: Հասարակական գործընթացի մասնակիցների միջև եղած համագործակցությունը խթանում էր զարգացումը: Սակայն տնտեսական և քաղաքական վերափոխումների հետագա գործընթացը բացահայտեց, որ իշխանությունները հասարակությանը իրենց իրական գործակիցը չեն համարում: Երբեմն, այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ բնակչությունը տնտեսական վերափոխումների իրականացման հարցում նույնիսկ խանգարող գործոն է: Պետության կողմից որդեգրված վերափոխումների ծրագիրը միակողմանիորեն ընդգրկում էր քաղաքական և տնտեսական փոփոխությունները՝ անուշադրության մատնելով սոցիալական ոլորտը:

Վերջին տասը տարիների մեր սոցիոլոգիական ուսումնասիրությունների համաձայն, իշխանություն-հասարակություն հարաբերությունները գտնվում էին նախնական զարգացման փուլում: Որպես կանոն, դրանք գտնվում էին նախորդ ավտորիտար-հրամայական կառավարման ոճի ազդեցության ներքո: Կորոնովիրուսի համաճարակի պատճառով ՀՀ կառավարությունը այս տարվա մարտի 16-ին երկրում հաստատեց արտակարգ իրավիճակ, որի համատեքստում այդ հարաբերությունները ստացան լրացուցիչ սահմանափակումներ: Գործնականում արգելվում են լայն սոցիալական ակտիվության և քաղաքացիական նախաձեռնության բոլոր տեսակի դրսևորումները: Այսպիսով, համավարակի աննախադեպ տարածման պայմաններում պետության և հասարակության կողմից համաճարակի դեմ պայքարը, միաժամանակ նշանակում է պայքար հասարակության կորսված քաղաքացիական ազատությունների վերականգնման և սոցիալական ակտիվ հատվածի սահմանադրական իրավունքների վերականգնման համար:

Ստեղծված պայմաններում իշխանություններն իրենք պետք է նախաձեռնեն առաջին քայլերը սոցիալական համագործակցության ուղղությամբ: Շատ կարևոր է համագործակցության մեխանիզմների իրականացումը սկսել կառավարման ստորին աստիճաններից, որոնք անմիջական շփման մեջ են բնակչության հետ: Հենց այստեղ,

տեղական իշխանության կառուցվածքներում է տեղի ունենում ամենաինտենսիվ շփումը սոցիալական տարբեր խմբերի հետ: Այս ուղղությամբ ձեռնարկվող իրական քայլերը, մասնավորապես՝ տեղական մակարդակով որոշումներ կայացնելու գործին բնակչության մասնակցության հստակ մեխանիզմների կիրառումը, կարող են հիմք դառնալ համագործակցության զարգացման համար: Դա կարող է լավ ազդակ լինել սոցիալական համագործակցության գործընթացի մյուս մասնակիցների համար: Համագործակցության զարգացումը այդ դեպքում պետք է ընթանա իշխանության ստորին աստիճաններից մինչև վերին աստիճանները և ողջ պետական համակարգն ավելի արդյունավետ կդարձնի: Հատկապես կարևոր է, որ իշխանությունները հասարակության հետ համագործակցության եզրեր գտնեն կառավարման բոլոր մակարդակներում[23]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից ժողովրդավարական պետությունում իշխանական ինստիտուտների և հասարակության միջև փոխհարաբերությունները բազմազան բնույթ են կրում, որոնց որոշակի մասը կարգավորվում են գործող ազգային օրենսդրությամբ: Վերջին տասը տարիների մեր սոցիոլոգիական ուսումնասիրությունների համաձայն, այդ հարաբերությունները գտնվում էին նախնական զարգացման փուլում և, որպես կանոն, նախորդ ավտորիտար-հրամայական կառավարման ոճի ազդեցության տակ: Կորոնովիրուսի համաճարակի և երկրում 2020 թ. մարտի 16-ին կառավարության կողմից հաստատված արտակարգ իրավիճակի համատեքստում այդ հարաբերությունները ստացան լրացուցիչ սահմանափակումներ, որոնք գործնականում արգելում են լայն սոցիալական ակտիվության և քաղաքացիական նախաձեռնության բոլոր տեսակի դրսևորումները: Այսպիսով, Հայաստանում COVID-19 վարակի աննախադեպ տարածման պայմաններում պետության և հասարակության կողմից համաճարակը հաղթահարելու պայքարը, միևնույն ժամանակ, նշանակում է պայքար հասարակության կորսված քաղաքացիական

[23] **Бурдье Пьер**, Социология политики, М., 1993, С. 115-118.

ազատությունների վերականգնման և սոցիալական ակտիվ հատվածի սահմանադրական իրավունքների վերականգնման համար:

Բանալի բառեր. իշխանություն, հասարակություն, համաձարակ, արտակարգ իրավիճակ:

ВЗАИМООТНОШЕНИЯ ВЛАСТЬ-ОБЩЕСТВО В ЧРЕЗВЫЧАЙНЫХ УСЛОВИЯХ ПАНДЕМИИ

Погосян Римма
Кандидат психологическихских наук, доцент,
Старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Взаимоотношения между институтами власти и обществом в современном демократическом государстве носят многообразный характер, определенная часть которых регламентирована действующим национальным законодательством. Согласно нашим социологическим исследованиям последних десяти лет эти взаимоотношения находились на стадии первоначального развития и как правило носили отпечаток прежнего авторитарно-командного стиля управления. В условиях коронавирусной пандемии и введенных в стране правительством 16 марта 2020 года чрезвычайного положения эти взаимоотношения оказались под дополнительными ограничениями, которые практически запрещают всяческие проявления социальной активности и гражданской инициативы. Таким образом, в условиях беспрецедентного распространения в Армении COVID-19 инфекции, борьба государства и общества по преодолению пандемии, одновременно означает борьбу ее социально активной части за возвращение утраченных обществом гражданских свобод и конституционных прав.

Ключевые слова: власть, общество, пандемия, чрезвычайное положение.

POWER-SOCIETY RELATIONSHIP IN EXTREME PANDEMIC CONDITIONS

Rimma Poghosyan
Candidate of Psychological Sciences, Associate Professor,
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

SUMMARY

The relationship between the institutions of power and society in a modern democratic state are diverse. A certain part of these relations are regulated by the current national legislation. According to the our sociological studies of last ten years, these relationships were at the stage of initial development and, as a rule, bore the imprint of the previous authoritarian-command style of management. In the context of the coronovirus pandemic and the emergency conditions introduced by the Armenian Government in the country on March 16, 2020, these relation were under the additional restrictions, that practically prohibit all manifestations of social activity and civic initiative. Thus, in the conditions of the unprecedented spread of COVID-19 infection in Armenia, the struggle of the state and society to overcome the pandemic, at the same time means the struggle for the return of the civil liberties and constitutional rights of the socially active part of society has lost.

Key words. Authorities, Society, Pandemia, Extreme conditions.

«ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԵՆՍԱԿԵՐՊԻ» ՈՐՈՇ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՄՊԵԿՏՆԵՐԸ

Ներսես Քոչարյան

Սոցիոլոգիայի մագիստրոս

Ժամանակակից հայ հասարակությանը բնորոշ է արագացող փոփոխություններ իր հոգևոր-քաղաքակրթական կյանքի որակը բաղկացնող բոլոր ոլորտներում՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական, կրթական…, և նույնիսկ ամուսնական հարաբերություններում: Օբյեկտիվ փոփոխությունները հանգեցնում են նաև անձնական մակարդակում նշանակալի փոփոխությունների արժեքային համակարգում, վարքաձևում, կենցաղում: Քրիստոնեությունը հնուց ի վեր և առ այսօր եղել է հայ ժողովրդի կենսակերպի ու կենսագործունեության անբաժանելի բաղկացուցիչը: Հայ մարդու համար քրիստոնեությունը հանդես է գալիս որպես կյանքի, գործունեության, մարդկային հարաբերությունների իմաստավորման հարացույց:

Քրիստոնեության ընդունումը արմատական ու հիմնարար հեղաշրջում է առաջացրել մարդկանց և հատկապես հայերի մտքերում, հոգիներում, կենսակերպում, որի նշանակալիությունն առ այսօր քննարկումների առիթ է հանդիսանում գիտական ու